ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.06.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 20/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով 29.05.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-20/15 բողոք) և կից փաստաթղթերը, ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 08.06.2015թ. N 8.1-44 գրությունը և կից փաստաթղթերը, ԳԲԽ-20/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 15.06.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Միկրորինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.05.2015թ. ներկայացրած բողոքով «Միկրորինգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) տեղ են գտել մի շարք բացթողումներ.

1. Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածով սահմանված պայմանագրի գնի հաշվարկը: Հաշվի առնելով այն փաստը, որ «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի գնային առաջարկում հստակ գրված է եղել ապրանքի արժեքը՝ 28091100 ՀՀ դրամ և ԱԱՀ-ն՝ 5618220 ՀՀ դրամ, ապա ճիշտ գնային առաջարկ է հանդիսանում 33709320 ՀՀ դրամը (արժեքի և ԱԱՀ բաղադրիչների գումարը): Գնի տառերով արտահայտության մեջ «յոթ» բառի բացակայության դեպքում պետք է ճիշտ գրված լիներ հետևյալ արտահայտությունը՝ «երեսուներեք միլիոն մեկ հարյուր ինը հազար երեք հարյուր քսան»: Հակառակ դեպքում «յոթ» բառի բացակայությունը ստեղծում է լրացուցիչ վեց հարյուր հազար դրամի միջակայք, որը մեծացնում է հաղթելու հավանականությունը: Ընկերության կարծիքով նման մոտեցումը կարող է միտումնավոր բնույթ կրել, որն էլ իր հերթին հանգեցնում է ոչ արդարացի (հավասար) մրցակցային պայմանների:

2. Խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 3-րդ ենթակետը, որտեղ հստակ նշվել է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը պետք է հայտարարեր տառերով գրված գինը և ոչ թե թվերով գրվածը: Տառերով և թվերով գրված գնային առաջարկի տարբերությունն անհասկանալի է և կասկածի տեղիք է տալիս:

3. Եվս մեկ սխալ է թույլ տրվել Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ: Այստեղ «Մասնակցի առաջարկած գին» բաժնում նշվել է, որ «Ռեդինետ» ՓԲԸ-ի ներկայացրած գինն առանց ԱԱՀ-ի կազմում է 26487456 դրամ, որի քսան տոկոս ԱԱՀ-ն կկազմի 5297491 ՀՀ դրամ, այսինքն ընդհանուր գինը պետք է լիներ 31784947 ՀՀ դրամ և ոչ թե 33709320 ՀՀ դրամ կամ 33109320 ՀՀ դրամ:

Ընկերությունը նշել է, որ քանի որ ընթացակարգի տեխնիկական բնութագրի 2.2 կետում նշված էր, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սնուցման սարքերը նախատեսված են օդային երթևեկության կառավարման գործընթացում անմիջականորեն գործածվող համակարգերի համար և պետք է ապահովեն բարձր հուսալիություն, ըստ Ընկերության՝ APC MGE Galaxy 300 սարքի «Միկրորինգ» ՍՊԸ-ի

կողմից առաջարկված կոնֆիգուրացիան ունի ավելի բարձր հուսալիություն և էֆեկտիվություն, քան infosec E4 LCD e -15000 TMS սարքի առաջարկված կոնֆիգուրացիան, քանի որ APC (Schneider Electric) ֆիրման հանդիսանում է այս բնագավառի առաջատարը:

Ընկերությունը խնդրել է անվավեր ճանաչել «Ռեդինետ» ՓԲԸ-ի ներկայացված գնային առաջարկը և տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչել «Միկրորինգ» ՍՊԸ-ին:

2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.06.2015թ. N 8.1-44 գրությամբ «Միկրորինգ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 14-ին տեղի ունեցած նիստով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ռեդինետ» ՓԲԸ-ն:

Ըստ Պատվիրատուի՝ Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման հետևյալ պատճառաբանություններով.

1. Բողոքաբեր կազմակերպությունն իր բողոքում նշել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 37-րդ հոդվածը, մինչդեռ Պատվիրատուն հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում տառերով գրված գումարը, ոչ թե խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, այլ՝ ղեկավարվել է բացառապես օրենքով:

Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը»:

Նույն մոտեցումը նախատեսված է Կարգի 44-րդ կետով, համաձայն որի՝ մասնակիցների գնային առաջարկներում հակասությունների դեպքում հիմք է ընդունվում տառերով գրվածը: Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ նշված կետը մանրամասնում է նաև այն դեպքերը, երբ գնային առաջարկում առկա են

թվաբանական սխալներ, որոնք արդյունք են միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման, սակայն նշված գործով նույն կարգավորումը կիրառելի չէ, քանզի միանշանակ է, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում տառերով և թվերով գրված գումարների միջև հակասությունը միավորի գնի և աշխատանքի քանակի սխալ բազմապատկման արդյունք չէ:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 7.2.5 կետը սահմանում է. «Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը»:

Այսպիսով, Պատվիրատուն՝ ի դեմս գնահատող հանձնաժողովի, հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում տառերով գրված գումարը, ղեկավարվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերով և ընթացակարգի հրավերով:

Ըստ Պատվիրատուի՝ բողոքաբեր կազմակերպությունը վկայակոչելով Օրենքի 37-րդ հոդվածը, ճիշտ չի մեկնաբանել նորմի բովանդակությունը, քանի որ նշված նորմը սույն դեպքում կիրառելի չէ, ուստի և Պատվիրատուն չէր կարող խախտել մի նորմ, որը տվյալ դեպքում կիրառելի չէր: Ավելին, Ընկերության կողմից ներկայացված բողոքի 1-ին կետում վերջինս որոշակի եզրահանգումներ է կատարել, չներկայացնելով որևէ հիմնավոր փաստ, որը կարող էր հիմք հանդիսանալ նման եզրահանգումներ կատարելու համար: «Միկրորինգ» ՍՊԸ-ն միանշանակ վստահ է, որ «հարյուր» բառը սխալ է և պետք է գրել «մեկ հարյուր», ապա վերջինս իր կողմից ներկայացված տուժանքի համաձայնության մեջ նույնպես պետք է նշեր, ոչ թե «հարյուր», այլ՝ «մեկ հարյուր», ինչը ևս հավաստում է, որ բողոքաբեր կազմակերպության եզրահանգումները հիմնավորված չեն:

2. Բողոքի 2-րդ և 3-րդ կետերում Ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին և գնման համակարգողին ներկայացված թերացումները կրում են ընթացակարգային, տեխնիկական բնույթ, չեն կարող ազդեցություն ունենալ ընթացակարգի արդյունքների վրա, ուստի և չեն կարող հիմք հանդիսանալ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից Ընկերության ներկայացրած բողոքը բավարարելու համար:

3. Ինչ վերաբերում է գնման ընթացակարգի արդյունքում ձեռք բերվող ապրանքի տեխնիկական բնութագրերին, ապա դրանք՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության

համաձայն՝ սահմանում է պատասխանատու ստորաբաժանումը, որն ունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ՝ գնահատելու համար Ընկերության կարիքների համար անհրաժեշտ ապրանքների տեխնիկական հատկանիշները, և բողոքաբերի կողմից դրանք կասկածելու հայտարարությունները, Պատվիրատուն համարել է անհիմն և ոչ տեղին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակել է համապատասխան հայտարարություն:

Ելնելով վերոգրյալից՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն խնդրել է «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարել չհիմնավորված և ամբողջությամբ մերժել:

3. <u>ԳԲԽ-20/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.06.2015թ. եզրակացությունը և առաջարկել է մերժել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտն անվավեր ճանաչելու և Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու պահանջների մասին «Միկրորինգ» ՍՊԸ-ի 29.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը:

4. <u>ԳԲԽ-20/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-20/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի **2015թ. մարտի 30-ի** թիվ 1 որոշմամբ հաստատվել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման

ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգի մասին հայտարարության տեքստը:

2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու համար հայտ են ներկայացրել «Միկրորինգ» ՍՊԸ-ն և «Ռեդինետ» ՓԲԸ-ն:

3. «Ռեդինետ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած N 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝ արժեք՝ 28091100 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 5618220 ՀՀ դրամ, առաջարկված գինը թվերով՝ 33709320 ՀՀ դրամ, տառերով՝ երեսուներեք միլիոն հարյուր ինը հազար երեք հարյուր քսան ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.05.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության «դ» ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգով «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի գնային առաջարկում կար անհամապատասխանություն՝ առաջարկված գնի տառերով և թվերով նշվածի միջև: Տառերով առաջարկված գինը նշվել է՝ երեսուներեք միլիոն հարյուր ինը հազար երեք հարյուր քսան ՀՀ դրամ, իսկ թվերով առաջարկված գինը նշվել է՝ 33709320 ՀՀ դրամ: Առաջնորդվելով Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ կետով՝ հանձնաժողովը որոշել է «Ռեդինետ» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկում հիմք ընդունել տառերով ներկայացված առաջարկը, այսինքն՝ 33109320 (երեսուներեք միլիոն հարյուր ինը հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամը:

5. Վերը նշված արձանագրության 1-ին կետով հանձնաժողովը որոշել է 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռեդինետ» ՓԲԸ-ին՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից տառերով ներկայացրած գնային առաջարկը՝ **33109320 ՀՀ դրամը**:

6. Պատվիրատուի կողմից 01.06.2015թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն «Ռեդինետ» ՓԲԸ-ի հետ 29.05.2015թ. կնքված պայմանագրի մասին, որտեղ նշվել է, որ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **33109320 ՀՀ դրամ**:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Միկրորինգ» ՍՊԸ-ի 29.05.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Կարգի 49-րդ կետի համաձայն ՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի՝ մասնակցի (մասնակիցների) գնային

առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 49.1 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.2.5 ենթակետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից «Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու համար «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացած հայտի N 4 հավելվածի՝ գնային առաջարկի ուսումնասիրությունից երևում է, որ Ընկերությունը պահպանել է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, և նրա կողմից առաջարկված պայմանագրի գնի հաշվարկում ներառվել են տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը):

Ինչ վերաբերում է «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում տառերով և թվերով գրված գումարների միջև առկա անհամապատասխանությանը, ապա Պատվիրատուն, ղեկավարվելով Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով, Կարգի 49.1 կետի 1-ին ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.2.5 ենթակետով, հիմք է ընդունել տառերով գրված գումարը:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից հայտով առաջարկված գնի տառերով արտահայտության մեջ «հարյուր» բառի փոխարեն **«մեկ հարյուր»** բառերը գրելու կապակցությամբ հայտնում ենք, որ առանց «մեկ» բառի «հարյուր» բառն հստակ ընկալվում է որպես «մեկ հարյուր», իսկ «յոթ» բառի բացակայությունը չի ստեղծում վեց հարյուր հազար դրամի միջակայք, ինչպես դա գտնում է Ընկերությունը:

Բացի այդ, «Միկրորինգ» ՍՊԸ-ն նույնպես «հարյուր» բառն ընկալում է որպես «մեկ «հարյուր», քանզի վերջինս հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնության 1.1.1 կետով սահմանել է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից

«Երևան» ՕԵԿ կենտրոնի սարքավորումների անխափան սնուցման ապահովման նպատակով անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման, տեղադրման և ուսուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՆ-ԲԸԱՇՁԲ-02/15» ծածկագրով բաց ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և բաց ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ վեց հարյուր վաթսունվեց հազար **հարյուր** ութսուն ՀՀ դրամ գումարի չափով, և չի օգտագործել **«մեկ հարյուր»** արտահայտությունը:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ «Մասնակցի առաջարկած գին» բաժնում «Ռեդինետ» ՓԲԸ-ի ներկայացրած գնում նշված «առանց ԱԱՀ-ի կազմում է 26487456 ՀՀ դրամ» արտահայտության կապակցությամբ հայտնում ենք, որ Պատվիրատուի և «Ռեդինետ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **33109320 ՀՀ դրամ,** որի վերաբերյալ Պատվիրատուի կողմից 01.06.2015թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն «Ռեդինետ» ՓԲԸ-ի հետ 29.05.2015թ. կնքված պայմանագրի մասին (այստեղ ևս նշվել է, որ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **33109320 ՀՀ դրամ)**:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից առաջարկված Infosec E4 LCD e-15000 TMS սարքի համեմատ «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված APC MGE Galaxy 300 սարքի ավելի բարձր հուսալիություն և էֆեկտիվություն ունենալու Ընկերության բերված փաստարկի կապակցությամբ հայտնում ենք, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել նշված պնդումը հավաստող ապացույցներ:

Բացի այդ, Ընթացակարգի հրավերով սարքի հուսալիության աստիճանի գնահատման կարգ նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Խարհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու որոշում կայացնելու լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. «Միկրորինգ» ՍՊԸ-ի 29.05.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ֆրանգյան Ազգանուշ**

Անդամ՝ **Հովսեփյան Արամ**